**Տեղի ունեցավ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նիստը**

31.03.2015

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, Արմավիրի մարզում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նախագահ Լարիսա Մուրադյանի մոտ այսօր տեղի ունեցավ  համապատասխան հանձնաժողովի անդրանիկ նիստը:

Փոխմարզպետ Լարիսա Մուրադյանի գլխավորությամբ հանձնաժողովը քննարկեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցի առթիվ Արմավիրի մարզում տոնակատարությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ծրագիրը:

Հանձնաժողովի անդամները ողջունեցին ծրագրում ընդգրկված միջոցառումների ցանկը, պատրաստակամություն հայտնեցին աջակցելու ծրագրի իրականացմանը, ապա նաև հանդես եկան առաջարկություններով, որոնք ընդունվեցին միաձայն: